

Փոխհատուցում. Հանցագործը պարտավոր կլինի վճարել ձեզ

Հանցագործության դեպքերում (ինչպես նաև որոշ զանցանքների դեպքերում) դատարանը կարող է դատապարտված հանցագործից պահանջել զոհերին վճարել նրանց կորուստների համար: Սա կոչվում է **փոխհատուցում**:

Պայմանականի բաժանմունքը ձեզնից կհարցնի, եթե դուք կցանկանաք բացատրել, թե ո՞րքան ինչպես է ազդել ձեր վրա: Սա մի առիթ է ձեր համար, որպեսզի դուք.

- Թվարկեք ո՞րքան հետեւանքով ձեր կրած դրամական կորուստները եւ
- Փոխհատուցում պահանջեք:

Դատարանը կկարողա ձեր տեղեկագիրը նախքան պատիժ որոշելը:

Դուք իրավունք ունեք.

- Լինել դատարանում, երբ հանցագործին դատապարտում են,
- Ասել դատարանին, թե ո՞րքան ինչպես է ազդել ձեր վրա եւ
- Ասել, թե ինչ պատիժ եք գտնում, որ ամենահարմար լինի, ներառյալ փոխհատուցում – կամ ո՞րքան հետ կապված ձեր կորուստների համար ձեզի վճարվելիք դրամ:

Դատավճռի եւ փոխհատուցման հետ կապված ձեր իրավունքների մասին ավելին իմանալու համար կապվեք մեզ հետ:

Դուք կարող եք արտահայտվել դատապարտյալի պայմանական դատավճռի լսումների ընթացքում

Շատ լուրջ հանցագործությունների դեպքում, դատապարտյալը չի կարող ազատ արձակվել առանց պայմանական լսումի: Այդ լսումներին դուք իրավունք ունեք խոսելու: Դուք կարող եք Պայմանականի Սարմնի ձեր կարծիքը տալ այն մասին, թե երբ է հարմար բաց թողնել դատապարտյալին:

Նշում. Հատուկ օրերներ են կիրառվում, եթե հանցագործը 18 տարեկանից փոքր է: Կապվեք մեր հետ, եթե ցանկանում եք խոսել Անչափահասի Պայմանականի Սարմնի հետ (Juvenile Parole Board):

Պայմանական լսումների մասին ավելին իմանալու համար կապվեք Կալիֆորնիայի Ողջունների եւ Վերականգնումի Բաժանմունքի հետ հետեւյալ կայքէջի վրա www.cdcr.ca.gov:

Ձեզ օժանդակող ուրիշ ծրագրեր

Կան բազմաթիվ հատուկ աջակցող ծրագրեր եւ աջակից խմբակներ, որոնք օգնում են զոհերին եւ նրանց ընտանիքներին, ներառյալ բռնաբարության ճգնաժամի, տնային բռնության եւ երեխայի չարաշահման: Ծրագիր կամ խմբակ գտնելու համար կապվեք մեզ հետ:

Մեր Կենտրոնը

Ոճիրի զոհերի սկզբնաղբյուրների կենտրոնը 1984 թվականից սկսած ամբողջ Կալիֆորնիայի տարածքին օգնել է հազարավոր ոճիրի զոհերի: Մեր ծառայություններն անվճար են: Մեր մասնագետների կազմը գիտի դաշտում եղած անենավերջին նորությունները: Մենք այստեղ ենք ձեզ առաջնորդելու եւ պատասխանելու որեւէ հարցումների:

Ձեր իրավունքների մասին հավելյալ տեղեկությունների կամ աջակցության համար որեւէ հարցումի:

Victims of Crime Resource Center
University of the Pacific, McGeorge School of Law

- Ջանգահարեք 1-800-VICTIMS (1-800-842-8467) հեռախոսահամարով
- Այցելեք՝ www.1800VICTIMS.org կայքէջը

Կենտրոնը University of the Pacific,
McGeorge School of Law-ի եւ
California Emergency Management Agency-ի ծրագիր է
(CalEMA - www.oes.ca.gov):

Armenian



UNIVERSITY OF THE
PACIFIC
McGeorge School of Law

Օգնություն ոճիրի զոհերի համար Կալիֆորնիայի մեջ



Օգնություն ոճիրի զոհերին եւ նրանց ընտանիքներին՝ իմանալու իրենց իրավունքները եւ ստանալու աջակցություն եւ ծառայություններ

Victims of Crime Resource Center
(Ոճիրի զոհերի սկզբնաղբյուրների կենտրոն)
1-800-VICTIMS (1-800-842-8467)
www.1800VICTIMS.org

Ոճիրի զոհերի իրավունքները Կալիֆորնիայում

Եթե դուք ոճիրի զոհ եք, դուք կարող է ոճիրից վերականգնվելու աջակցության կարիք ունենաք: Հնարավոր է, որ ոճիրը ձեզ նյութական, իրավական, առողջապահական կամ հոգեբանական խնդիրներ պատճառած լինի: Այս բրոշյուրը կբացատրի ձեր իրավունքների եւ ձեզ եւ ձեր ընտանիքին հասնելիք ծառայություններին եւ օժանդակության մասին:

Դուք իրավունք ունեք հետեւյալներին.

Դրամ: Դատարանը կարող է ոճրագործին հրամայել վճարելու ոճիրի հետ կապված ձեր կորուստների համար, ներառյալ այն դրամը որ հարկավոր է վճարելու.

- Խորհրդատվության,
- Կորցրած աշխատավարձի,
- Ձեր վնասվածքների համար բժշկական ծախսերի եւ
- Հուղարկավորության եւ թաղման ծախսերի համար:

Դատարանին տեղեկացրեք ձեր վնասների մասին: Նախքան ոճրագործի պատժի մասին դատարանի որոշումը, դուք կարող եք դատարանին տեղեկացնել, թե ոճիրն ինչ հետեւանք է ունեցել ձեր կյանքի վրա:

Ապահովություն եւ պաշտպանություն: Եթե դուք, ձեր ընտանիքը կամ որեւէ ակնատես վախենում է ոճրագործից, կարող եք դատարանից խնդրել պաշտպանական հրաման:

Մանր պահանջների դատարանի (small claims court) մեջ դատ հարուցել: Եթե դուք 10,000 դոլարից ավելի դատ չեք հարուցում, դուք կարող եք Մանր պահանջների դատարանի մեջ դատ հարուցել: Այդ դատարանին մեջ դուք իրավաբանի կարիք չեք ունենա: Եւ յուրաքանչյուր դատարան ունի մանր պահանջների խորհրդատուներ՝ մարդկանց իրենց գործերի համար օգնելու նպատակով: Ավելի իմանալու համար այցելեք՝ www.courts.ca.gov/selfhelp-smallclaims.htm կայքէջը:

Հատուկ մի օրենք, որ կոչվում է *Ձոհերի իրավունքների Օրինագիծ* (կամ *Marsy's Law*), աջակցում է ոճիրի զոհերին եւ նրանց ընտանիքներին:

Լավ միտք է կարդալ այս օրենքը, որպեսզի իմանաք ձեր բոլոր իրավունքների մասին: Դուք կարող եք տպել օրենքը եւ սկզբնաղբյուրների մի ցանկ ունենալ www.oag.ca.gov/victimservices/marsy կայքէջից:

Քաղաքացիական դատարանի մեջ դատ հարուցել: Դուք կարող եք ոճրագործին դեմ դատական գործ հարուցել պահանջելով դրամ կամ իրավաբանական վճարումներ: Եթե կալվածատերեր կամ պետական միավորներ մեղսակից են ոճիրին, ապա դուք կարող եք դատի տալ նաեւ նրանց: *Կարեւոր...* Քրեական գործ սկսելու համար կան շատ խիստ ժամկետներ, եւ դատական օրենքները կարող են բարդ լինել: Եթե ուզում եք գործ հարուցել՝ անհապաղ խոսեք իրավաբանի հետ: Իրավաբան գտնելու համար զանգահարեք մեզ կամ զանգահարեք.

Կալիֆորնիայի Նահանգի Իրավաբանների Կազմակերպության իրավաբանական հանձնարարությունների ծառայություն. **1-866-442-2529** – *Ձանգն անվճար է...*



Դրամ եւ Օժանդակություն ստանալու Օգնություն

Մի շարք ծրագրեր եւ պրոցեսներ զոհերին օգնում են դրամ, օժանդակություն եւ ուղղություն ստանալու, ներառյալ.

- Ձոհի Հատուցման Ծրագիր (Victim Compensation Program - CalVCP)
- Ձոհի/Վկայի Աջակցության Կենտրոններ (յուրաքանչյուր քաունթի ունի իրը)
- Փոխհատուցում եւ այլ ծրագիրներ եւ կազմակերպություններ

Ձոհի Հատուցման Ծրագիր

Այս ծրագիրը կարող է ոճիրի հետ կապված ծախսերի համար յուրաքանչյուր զոհի տալ մինչեւ **70,000 դոլար**: Դուք կարող եք ծախսերի համար դրամ պահանջել, որ ամբողջապես ծածկված չեն ձեր ապահովագրական ընկերության կողմից, դատավճիռով կամ ուրիշ ծրագրերով, ներառյալ.

- Խորհրդատվության, բժշկության եւ ատամնաբուժության ծառայությունների կամ սարքավորումների
- Կորցրած աշխատավարձի, խնամքի ենթակաների օժանդակության կամ երեխայի խնամքի, այն

դեպքում երբ մատակարարը ոճիրի հետեւանքով դարձել է հաշմանդան կամ սպանվել է

- Հուղարկավորության եւ թաղման ծախսերի
- Աշխատանքի ուսուցման կամ վերապատրաստման
- Ոճիրի հետեւանքով հաշմանդանության պատճառած փոփոխությունների՝ կապված տան անվտանգության համակարգի կամ ձեր տան եւ կամ ձեզի անհրաժեշտ ավտոմեքենայի հետ կապված փոփոխությունների
- Ոճիրի տեղանքի մաքրության եւ տեղափոխության ծախսերի
- Ապահովագրության վճարման մասնակցության

Կարեւոր... Այս ծրագիրը չի հատուցում *գույքի* կորստի համար:

Ով կարող է հատուցում ստանալ

Դուք կարող եք հատուցում պահանջել (դրամ), եթե դուք ոճիրի կատարման չեք օժանդակել եւ պատրաստ եք տեղեկացնելու ոճիրի մասին եւ համագործակցելու օրինապահ մարմինների հետ, ինչպես նաեւ եթե դուք.

- վնասվել եք ձեզ հատուցման իրավասու դարձնող ոճիրի հետեւանքով,
- զոհի հոգատարության ենթակա եք,
- 18 տարեկանից փոքր զոհի մատակարար եք,
- ոճիրի հետեւանքով մահացած անձի վճարումներն եք անում եւ կամ
- զոհի տնտեսության անդամ եք կամ ազգական, եւ դուք կարիք ունեք բժշկական խնամքի կամ խորհրդատվության, եւ կամ ոճիրի հետ կապված դրամական վնասների եք ենթարկվել:

Ինչպես հատուցում ստանալ

Դիմեցեք ոճիրից մինչեւ **1 տարվա** ընթացքում (բացի եթե դուք ուշ դիմելու հիմնավոր պատճառ ունեք): Դիմելու համար կապվեք Ձոհի Հատուցման եւ Պետական Բողոքի Մարմնին (Victim Compensation and Government Claims Board).

- Ձանգահարեք **1-800-777-9229** հեռախոսահամարով կամ
- Այցելեք՝ www.vcgb.ca.gov կայքէջը

Հատուցում ստանալու ուրիշ ձևեր

Շատ ուրիշ ծրագիրներ զոհերին տալիս են դրամական օգնություն, ներառյալ.

- Աշխատավորների Հատուցումը (Workers' Compensation)
- Անգործության ապահովագրությունը (Unemployment insurance)
- Ժամանակավոր Օժանդակություն Կարիքավոր Ընտանիքների (Temporary Assistance to Needy Families - TANF)
- Դաշնակցային եւ նահանգային անկարողության ծրագրեր



- Medi-Cal
- Ձեր տան կամ ավտոմեքենայի ապահովագրությունը

Ձոհի/Վկայի Աջակցության Կենտրոններ

Յուրաքանչյուր նահանգ ունի Ձոհի/Վկայի Աջակցության Կենտրոններ (Victim/Witness Assistance Center): Այս կենտրոններն օգնում են զոհերին ոճիրի հետեւանքով առաջացած խնդիրների հետ:

Ձեր կենտրոնը ձեզ կօգնի.

- Ձոհի Հատուցման Ծրագրին (Victim Compensation Program) դիմել դրամի համար
- Պատրաստվել դատարանի համար, ներառյալ՝ դատարանին պատմել, թե ոճիրն ինչպես է ազդել ձեր վրա, նաեւ խնդրել դատարանից, որ հանցագործից պահանջի ձեզ փոխհատուցում վճարել
- Հանձնարարականների համար, որ ուրիշ ծրագիրներ օգնեն ձեզ
- Դասավորելու փոխադրամիջոց եւ երեխայի խնամք այն ժամանակամիջոցի համար, որ դուք դատարան եք գնում
- Արտահերթ սնունդ, ապաստան եւ հագնելիք ունենալ
- Ձեզ եւ ձեր ընտանիքը պաշտպանելու համար դատարանի հրաման ձեռք բերել
- Կատարվածի մասին բացատրություն տալ ձեր գործատիրոջ, բժիշկներին եւ պարտատերերին

Ինչպես գտնել ձեր Ձոհի/Վկայի Աջակցության Կենտրոնը

Գտնելու համար ձեր տեղական Ձոհի/Վկայի աջակցության կենտրոնը.

- Ձանգահարեք մեզ **1-800-VICTIMS** (1-800-842-8467) հեռախոսահամարով
- Այցելեք մեզ՝ www.1800VICTIMS.org կայքէջ